ԿՐԹՈՒՐՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»
ՍՈՑԻԱԼ- ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ - 2-րդ

Առարկան- Հայոց լեզու և գրականություն

ԹԵՄԱ - Ծնող-ուսուցիչ-սովորող կապը առաջադիմության և զարգացման գործընթացում

Հետաղոտող - Ամալյա Գալստյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԱՆՎԱՆ № 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

Ղեկավար - Գոհար Մկրտչյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____3

Հետազոտության նպատակը_____-5

Հետազոտության խնդիրները_____5

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ՝ որպես սովորողի

առաջադիմության ու զարգացման նախապայման----------6

3.Ծնողական ժողովների նպատակներն ու խնդիրները ----------9

4.ՈՒսուցիչ–ծնող փոխադարձ համագործակցությունը ժամանակակից

տեխնիկական միջոցների կիրառմամբ ---------- 13

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ_____12

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 15

7. ԱՄՓՈՓՈՒՄ_____18

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<< Դաստիարակը դաստիարակվողների վրա ազդում է ոչ միայն որոշակի գիտելիքներ տալով նրանց, այլև իր վարքագծով, ապրելակերպով,առօրյա երևույթների նկատմամբ վերաբերմունքով>>

Միխայիլ Կալինին

«Չկա այնպիսի մի վատ մարդ, որին լավ դաստիարակությունը չդարձնի ավելի լավը»:

Վիսարիոն Բելինսկի

Յուրաքանչյուր հասարակություն ուզում է, որ իր անդամները լինեն զարգացած, կիրթ ու հասարակությանը ճիշտ ծառայող անհատներ:
Յուրաքանչյուր մայր և յուրաքանչյուր հայր անկեղծորեն երազում են իր երեխային լավ ու երջանիկ մարդ տեսնել:Իհարկե , մանկավարժները շատ ջանքեր են գործադրում, որ իրենց բոլոր սաները դառնան ազնիվ, բարի, աշխատասեր մարդիկ: Բայց բոլոր դեպքերում նրանք չեն կարող փոխարինել երեխաների հորը կամ մորը , որոնց ազդեցությունը իրենց զավակների վրա չափազանց մեծ է:
Վերը նշված բոլոր նպատակներին հասնել կարելի է միայն այն դեպքում, եթե ծնողների ընտանիքի դաստիարակչական ջանքերը համընկնեն հասարակական դաստիարակության համակարգի աշխատողների ջանքերին :
Այժմ, երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ուղղված է անձին, ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով սովորողի անհատականությունը: Իսկ, ինչպես հայտնի է, անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում, և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Շատ հաճախ կարելի է կարծիք լսել, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա իսկապես այդպես է:

Բնավորության հիմնական գծերը կա՛մ գենետիկորեն դրված են, կա՛մ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես սատկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում՝ դասարանի, թիմի, ուսուցիչների և դասղեկի ազդեցության տակ:

Երեխայի դաստիարակության ուղղությամբ ծնողների և մանկավարժների համատեղ ջանքերն ամենից առաջ ենթադրում են նրանց փոխադարձ հարգանքը , ուշադիր և քաղաքավարի վերաբերմունքը միմյանց նկատմամբ: Փոխադարձ հարգանքը ներառում է նաև փախադարձ վստահությունը :Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները , էթիկայի նորմերը:

Եվ ինչպես ասել է ռուս մեծ ուսուցիչ Սուխոմլինսկին. «Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա»:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամամանակակից շրաջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող- ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա: Մեծաքանակ աշակերտներով դասարաններում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար բոպեներ տրամադրել

այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից…

Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և գոնե դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նպատակն է նպաստել, զարգացնել և կատարելագործել ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության,զարգացման և դաստիարակության որակների բարձրացման վրա,ինչպես նաև ծնողների ուսուցման գործընթացին ներգրավվածության աստիճանի բարձրացմանը:

Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակությոն և կրթության համար :ներգրավել ծնողներին՝ ակտիվ մասնակցելու ուսումնադաստիարկչական աշխատանքներին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

. Ինչպե՞ս կառուցել դաստիարակության գործընթացը՝ հաշվի առնելով անձի տարիքային և անհատական առանձնահատկությունները :

. Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

Գրական ակնարկ

Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ՝ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման նախապայման

Հին դպրոցական աֆորիզմում ասվում է. «Երեխաների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է »:|

Ընտանիքը՝ որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով: Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարբեր գործողություններում:

Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը: Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների, հայացքների, զգացմունքների, սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում:Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը:

Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը, օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության , սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ:

Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է:

Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները,ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասխանը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ:

Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում:

Ծնող-ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը , ինչպես նաև դպրոցի ուծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնող- ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար: Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է՝

.ծնողներին և ընտանիքներին դիտի որպես գործընկերներ
.կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ
. հրավիրի ընտանիքներին իրենց մասնակցությունը բերելու ծրագրին
. ընդլայնի աջակցությունը ընտանիքներին՝ տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով
.աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում:/

«Քայլ առ քայլ» -ի չափորոշիչների կիրառումը դասարաններում/

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը ներգրավված է ուսումնական գործընթացին:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը , այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է

հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց կրթական երեխաների կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը:

http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

Ծնող- դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Այդ կապը էլ ավելի կզարգացնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ: Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները /համակարգիչ, հեռախոս/ կարելի է ծնողների հետ քննարկումները կատարել հեռավար: Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքների և ուսման առաջադիմության կամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ:

Ուսուցիչը օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները, կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն՝ շաբաթական կամ ամսեկան մի քանի անգամ: Միացման այս ձևը ծնողներին տալիս է սովորողի գիտական առաջընթացի շոշափելի վկայություններ:

Ծնողական ժողովների նպատակներն ու խնդիրները

Այս ժողովների ժամանակ հանդիպում են ուսումնական գործընթացի երկու կողմերը՝ մանկավարժներ և ծնողներ, որպեսզի քննարկեն և լսեն միմյանց երրորդ կողմի՝ սովորողների խնդիրները:

Ծնողական ժողովները կազմակերպվում են դասղեկների կողմից և հիմնականում դասարանում սովորողների առաջադիմությունը քննարկելու և ամփոփելու նպատակով: Որոշ ծնողներ ծանոթ լինելով իրենց երեխայի ցածր առաջադիմությանը,խուսափում են մասնակցել ծնողական

ժողովներին,ինչը որ ինքնին շատ սխալ մոտեցում է: Երբեմն այդպիսի

ծնողական ժողովները վերածվում են <<լավ>> և <<վատ>> գնահատականներ ունեցող սովորողներին գովելու կամ նախատելու գործընթացի, որն էլ իր հերթին շատ հաճախ ավարտվում է ծնողների դժգոհությամբ: Նման դեպքերում պետք է խուսափել և թույլ չտալ ներքոհիշյալ սխալները.

Համեմատել մի սովորողին մյուսի հետ,բացասական գնահատական տալ ողջ դասարանին,գերագնահատել որևէ առարկայի կարևորությունը,նախատել որևէ ծնողի բոլորի ներկայությամբ

Լուրջ խնդիր է զարգացնել թե՛ ծնողի, թե՛ ուսուցչի ինքնագիտակցությունը, պատասխանատվությունը սովորողների նկատմամբ և որ ամենակարևոր ու պարտադիր պայմաններից մեկն է՝ կարողանան լավ ճանաչել իրենց երեխաներին:

Ծնողներն ու ուսուցիչները նույն սովորողների դաստիարակներն են և ունեն ընդհանուր նպատակներ:Հետևաբար, որպեսզի սովորողի կրթության կազմակերպումն ու առօրյան լինեն լիարժեք,իսկ դաստիարակությունն՝ առավել արդյունավետ, անհրաժեշտ պայման է ծնող-ուսուցիչ սերտ կապը և փոխադարձ համագործակցությունը: Դպրոցը սովորողին տալիս է գիտելիքներ և իրականության նկատմաբ դաստիարակում գիտակացական վերաբերմունք: Իսկ ընտանիքը ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Սովորողի ներդաշնակ զարգացման համար
վերոնշյալ որակները խիստ անհրաժեշտ են : Ընտանիքի և դպրոցի
լավ, բարեկամականհարաբերություններից սովորողները միայն շահում են:
Սովորողի դաստիարակության գործընթացում համար մեկ ազդեցիկ ուժը
սեփական օրինակն է թե՛ ուսուցչի, թե՛ ծնողի:

Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շպրտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-երեխա-մանակավարժ-դպրոց

համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար

անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը, վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝

. Ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:Հատուկ ուշադրություն դարձնել դասարանում ծնողների աթոռների դասավորության վրա: Օրինակ , կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև որպեսզի բոլոր ծնողներըլավ տեսնեն և լսեն միմյանց:

. Ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպմանխմբային ձևեր:

. Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի
խորհրդի կարծիքների վրա:/Կ. Դ. Ուշինսկի/

Ծնողական ժողովների ժամանակ դասղեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.

Հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողներին հանդիպելուց առաջ:

Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրություն նրանց հանդեպ:

Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:

Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում /ռիսկային խմբի/ ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:

Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների

դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:

Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին , կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ:/Կ. Դ. Ուշինսկի/

Ինչպես ասել է Սուխումլինսկին «Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա»:

Ծնողական ժողովները լինում են թեմատիկ:Այս ժողովները անցկացվում են որևէ կոնկրետ թեմայով ,որն ունի առաջնահերթ կարևորություն տվյալ պահին:

Ներկայացնենք կոնկրետ թեմատիկ ծնողական ժողովի օրինակ, որի թեման է <<Օգնություն հիմնական դպրոցի շրջանավարտին ավագ դպրոցում հոսքային ընտրություն կատարելու հարցում>>, որն անհրաժեշտ է անցկացնել 9-րդ դասարանցիների և ծնողների հետ համատեղ, տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի սկզբին: Այս ժողովի նպատակներն են.

1. Ծնողներին տեղեկացնել ավագ դպրոցում հոսքային ուսուցման և 9-րդդասարանում նախնական մասնագիտական պատրաստվածության մասին:
2. Ծնողներին օգնել հաղորդակցվել իրենց երեխաների հետ՝նախնական
3. ….մասնագիտական կողմնորոշման խնդիրների շուրջ:
4. Ծնողներին տեղեկացնել և ծանոթացնել 9-րդ դասարանն ավարտելուց հետո իրենց երեխաների ուսումը շարունակելու վերաբերյալ:

Կազմակերպչական ծնողական ժողովների նպատակն է հաշվի առնելով ծնողների կարծիքներն ու տալով նրանց ընտրության հնարավորություն՝ համատեղ լուծել դասարանում մի շարք կազմակերպչական խնդիրներ: Այդպիսի խնդիրները կարող են լինել տարբեր բնույթի:Օրինակ՝ դասարանական միջոցառումների,էքսկուր-սիաների,արշավների,զբոսանք բնության գրկում,դասարանական ցերեկույթների կազմակերպում, դասասենյակի , միջանցքի, կամ որևէ վահանակի ձևավորում և այլն: Երբ քննարկումներն ավարտվում են և աշխատանքները բաժանվում, սկսվում են կազմակերպչական աշխատանքները: Նմանատիպ ակտիվ աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը առավել դրական է ազդում սովորող-ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության վրա ու ստեղծում շատ հաճելի և դրական մթնոլորտ:Իրենց հերթին սովորողները մեծ ոգևորությամբ և աշխուժությամբ են մասնակցում կազմակերպչական աշխատանքներին: Իրենց կարծիքն ու ճաշակը հաշվի առնելու դեպքում՝ առավել մեծ պատասխանատվությամբ են մոտենում յուրաքանչյուր հարցին:

Օրինակ 10-րդ դասարանում կանանց միջազգային տոնի առթիվ կազմակերպեցին միջոցառում : Աշակերտները ձևավորել էին աղանդերի գեղեցիկ սեղաններ ,որի շուրջը նստել էին մայրերն ու ուսուցչուհիները:

Աշակերտները ստեղծել էին նաև այգու տեսարան գեղեցիկ համարներ՝ շնորհավորանքներ, երգ, պար, փոքրիկ բեմականցումներ :Ընթացքում բաժանեցին նաև գեղեցիկ ձևավորած փոքրիկ նվերներ: Սա շատ հաճելի անկնկալ էր մայրիների և ուսուցչուհիների համար: Ստեղծվել էր հաճելի ու ջերմ մթնոլորտ ,որը դրական ազդեցություն ունեցավ ծնող-ուսուցիչ-սովորող հարաբերությունների վրա : Երեխաներն ուրախ էին ու շատ գոհ:

Եթե նախկինում ծնողներն իրենց երեխայի դպրոցական կյանքի միայն պասիվ հանդիսատեսն էին,ապա այժմ դառնում են նրա ակտիվ մասնակիցները :

9-րդ և 10-րդ դասարանների աշակերտների, ծնողների և ուսուցիչների մասնակցությամբ անցկացվեց գրական ցերեկույթ՝ <<Պոեզիայի ժամ>>, որի ժամանակ բոլորը երաժշտության ուղեկցությամբ մեծ ոգևորվածությամբ արտասանում և երգում էին սիրված ստեղծագործությունները :

Այդ մի քանի ամիսների ընթացքում դպրոցում տիրում էին ոգևորություն,խանդավառություն,բոլորն շտապում էին իրենց հանձնարարականները կատարել:

ՈՒՍՈՒՑԻՉ–ԾՆՈՂ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Ժամանակակից զարգացած տեխնիկական միջոցները լայն ու բազմազան շփման հնարավորություններ են ընձեռնում: Շնորհիվ շուրջօրյա հասանելիության ապահովման,ծնողն ու ուսուցիչը օրվա յուրանքանչյուր վայրկյան հասնելի են միմյանց համար,որն էլ շատ կարևոր գործոն է և ունի մեծ նշանակություն ուսուցիչ-ծնող փոխաարձ համագործակցության վրա:Բազմազան ու բազմաֆունկցիոնալ են առցանց

հարթակները, որտեղ ազատ կերպով կարող են շփվել ուսուցիչները, ծնողներն ու սովորողները:Նմանատիպ հարթակներում կարելի է քննարկել ամեն ինչ: Նման շփումներն ու համագործակցություններն ունեն իրենց առավելությունները:Օրինակ՝ եթե սովորողը հետ է մնում կամ ինչ-որ խնդիր է առաջացել, չի կարելի սպասել այնքան մինչև ծնողն ինքը կմոտենա, կամ այդ մասին բարձրաձայնել միայն որոշ ժամանակ անց՝ ժողովի ժամանակ:Ուսուցիչը պետք է նմանատիպ խնդիրների դեպքում կապ հաստատի ծնողի հետ անմիջապես.լինի դա հեռախոսով, սոցիալական ցանցի միջոցով, թե էլեկտրոնային փոստով: Սովորողը հաջողության կհասնի միայն այն դեպքում,երբ ճիշտ ժամանակին, փոխադարձ համագործակցելով իրեն կուղղորդեն և՛ ծնողը, և՛ ուսուցիչը միաժամանակ:

Ուսուցիչը պետք է լինի պոզիտիվ, առանց բացառությունների, պետք է յուրաքանչյուր սովորողի ծնողին ՝օգտվելով վերոհիշյալ ծրագրերից, ուղարկի տեղեկատվություն.օրինակ՝ ի՞նչ զարմանալի կամ գովելի բան է արել երեխան դասի ժամանակ ամենափոքրիկ բանն անգամ կարող է մեծ փոփոխություն մտցնել: Ամենափոքրիկ գովասանքն անգամ մեծ ոգևորություն նպատասխանատվություն է առաջացնում թե՛ ծնողի, և՛թե սովորողի մոտ: Այս կապն է, որ հանդիսանում է ուսուցման կազմակերպման բարելավման շարունակական ֆակտոր: Ժամանակակից զարգացած տեխնոլոգիական միջոցներով հաղորդակցումը խնայում է ուսուցչի և ծնողի համար և՛ ժամանակը, և՛ տարածությունը:Եթե ծնողը ժամանակի սղության

պատճառով չի կարողանում հաճախել դպրոց, ապա նման ծնողի հետ ուսուցիչը պարտադիր պետք է անընդհատ կապի մեջ լինի,էլեկտրոնային նամակների տեսքով անհատական տեղեկատվություն հաղորդի երեխայի մասին:

Ստորև բերված գծապատկերում հստակ երևում է, որ ինչքան բարձր մակարդակով և սերտ է ուսուցչի փոխադարձ համագործակցությունը ծնողի հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում,այնքան արդյունավետ է կրթության կազմակերպումն ու դաստիարակությունն



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ուսումնասիրությունները ցույց տվեցին ,որ ուսուցիչ-ծնող հարաբերությունները անպայման ազդում են ոչ միայն դպրոցականների առաջադիմության ու հասարակական ակտիվության այլև նրանց մեջ աշխատասիրության , կոլեկտիվիզմի , նախաձեռնության , կարգապահության , պատասխանատվության, ազնվության, նրանց մեջ պահանջկոտության, ինքնուրույնության , նպատակասլաության , և շատ ուրիշ հարաբերությունների ձևավորման վրա

Ծնողի և ուսուցչի փոխադարձ համագործակցություն նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն՝սովորողի հաջողությունների և կրթության որակի բարձրացմանը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:Այն միավորում է ծնողներին ու ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն և ազդեն սովորողի առաջադիմության վրա: Ծնողը պետք է ունենա մեծ կամք, իսկ ուսուցիչը պետք է ամեն ինչ անի,որ ծնողի մոտ բարձրանա մանկավարժական կուլտուրան:

Որպես վերլուծական խոսք առանձնացվում են նաև այն բոլոր <<օգուտները>>,որոնք որ ստանում են ուսուցիչ-ծնող-սովորող-դպրոց փոխադարձ համագործակցության ընթացքում, յուրաքանչյուրն իր հերթին.

Օգուտ սովորողին

Անկախ սովորողի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, երբ ծնողն ու ուսուցիչը փոխադարձ համագործակցում են,սովորողի մոտ բարձրանում է նոր ձեռքբերումների մակարդակը

- Սովորողն ավելի դրական է տրամադրվում դպրոցի հանդեպ
- Մեծանում է վստահությունը սեփական անձի և ապագայի հանդեպ Օգուտ ծնողին
- Սկսում է ավելի շատ հասկանալ ու ճանաչել իր երեխային
- Սկսում է ավելի շատ ուշադրություն հատկացնել երեխայի սոցիալական և մտավոր զարգացման վրա
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում իր սեփական գիտելիքները

- թարմացնելու և զարգացնելու վրա,աշխատում է զարգացնել նոր հմտություններ
- Սկսում է ավելի վարժ և վստահ տիրապետել իր երեխայի վիճակի մասին տեղեկատվությանը և ժամանակին է լուծում խնդիրը՝ ուսուցչի հետ միասին Օգուտ ուսուցչին

Ուսուցչի մոտ բարձրանում է ինքնավստահությունը և հարգանքը իր մասնագիտության նկատմամբ

- Ուսուցիչը ունենում է միշտ լավ արդյունքներ
- Ուսուցիչը ստանում է սպառիչ տեղեկություն յուրաքանչյուր սովորողի մասին, ըստ այդմ ցուցաբերում է անհատական մոտեցում ինչի արդյունքում էլ ստանումէ ցանկալի արդյունք:

Օգուտ դպրոցին

Ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցությունը դրական է ազդում նաև դպրոցի վրա

- Դպրոցն ստանում է ավելի մեծ աջակցություն ծնողների կողմից
- Հասարակության մեջ բարձրանում է դպրոցի հեղինակությունը

Տարեկան կտրվածքով բարձրանում է դպրոցի բոլոր ցուցանիշների մակարդակը

Ամենակարևորը՝ «Կրթության եռանկյունին» ,այն հարաբերություններն են, որոնք գոյություն ունեն ծնողների, ուսուցիչների և սովորողների միջև: Այս փոխադարձ համագործակցությունը պետք է լինի ուժեղ,կենտրոնացած և դրական՝ աջակցելու սովորողների ուսմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև»: Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ , նաև աշխարհի ապագա պատմությունը:

Ա. Ս. Մակարենկո

Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը:

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց – ընտանիք համագործակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռուզաննա Մուրադյան <<Դասղեկ>>մեթոդական ձեռնարկ ,Երևան 2007
2. Նախաշավիղ 1. 2012
3. Դասագիրք <<Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն >>1986
4. Վ.Դ.Սեմյոնով <<Փոխազդեցություն դպրոցի և սոցիալական միջավայրի միջև >>
5. Ն.Խ.Բոլդիրև <<Դաղեկ >> Երևան 1974
6. ԿԱԻ<<Դաստիարակչական աշխատանքը դպրոցում >> Երևան 2012